


ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՎԵԼՅԱՆ

# ՊՕԷՏԻ ԵՐԱԶԸ

Գիշ Մի ԳՈՐԾՈՎՈՒԹԻՒՆՆԱԾ



ԹՐՅԱՐՈՒ

Տպարան «ԿՈՎՈՎՈՒՐԱ» Հեղ. | Տիոգր. Տ-վա «Կուլտуրա»  
Վելյամինովսկայ պլ., թ. 18.

1909

891-99 | Sept 1<sup>001</sup> - 31.  
Ch-13 | Multiple times 02  
18915 30/01/87

0 1159 00411

19 NOV 2010

652005

ԱՐԵՎԱՆԴՐ ԱԲԵԼՅԱՆ

891.99 - 2.  
9-12-13 w.y.

3.1

# ՊՕԷՏԻ ԵՐԱԶՄ

1001  
151

Պիես Մի ԳՈՐծՈՂՈՒԹԻՒՆՆՈՎ



ФРЫНЧУ

Տպարան «Կուլտուրա» Բնկ. | Տիոգր. Թ-va «Կուլտуրա»  
Եզրակացնական պատճենահանձնություն

- 01 2013

16.694

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

ՄԻՀՐԱՆ Զարուի ամուսինը:

ԶԱՐՈՒ Արա կինը:

ՍՈՒՐԵՆ Զարուի եղբայրը:

ՄԻՄՄԻ Սուրէնի սիլուտին:



Տեսաբանը ներկայացնում է մի սենեակ, մշտե-  
ղի եւ աջ պատի վրա մի-մի դրու, ծախ պա-  
տի վրայ պատռուն: Մի անկիւնում՝ կօժող:  
Գրաւեղան, աթոռներ եւ այլն:

### ՏԵՍԻԼ 1.

#### ԶԱՐՈՒ ԵՒ ՍՈՒՐԵԿ-ԵԳԻ

ԶԱՐՈՒ.—Ինչու ես ինձ ծաղրում, ՍՈՒՐԵԿ-  
ՍՈՒՐԵԿՆ.—Ես քեզ չեմ ծաղրում, Զարու,  
այլ ասում եմ պէտք է պարծենաս, որ քո ամու-  
սինը պօէտ է... ճըմ... պօէտ տ,

ԶԱՐՈՒ.—Ախ, միթէ ես չէի կարող սիալ-  
վել, Սկզբից ես անփորձ էի և սգնորվող, իսկ հի-  
մա եկել եմ այն եղբակացութեան, որ գլխին զօր  
տալով նրանից պօէտ չի լինիր:

ՍՈՒՐԵԿՆ.—Դատարկ բան ես ասում, Զարու  
Ժամանակակից պօէտ լինելու համար մի առան-  
ձին գլուխ հարկաւոր չէ, բաւական է, որ ունե-  
նաս միմիայն ոտեր, այսինքն՝ հաց—կաց, գինի—  
քնի, աղ—մաղ, ձուկ—մուկ, անձար—բանջար:

ԶԱՐՈՒ.—Աւելի լաւ էր, լինէր նա մի հա-  
մեստ կօշկակար, քան անյաջող պօէտ:  
ՍՈՒՐԵԿՆ.—Արի մի երկպետեան դաշնակ-  
ցութիւն կազմենք և այսօր սեթ մի լաւ յար-

ձակվենք նրա վրա: Ե՞նչպէս լինի, որ երկսով  
փառաւորապէս ջարդ ու փշուր չանենք նրան:

**ԶԱՐՈՒԻ.**—Դու կատակ արա, բայց տես, թէ  
ես ինչ կըբերեմ նրա գլխին:

### ՑԵՍԻԼ 2.

#### ԶԱՐՈՒԻ, ՍՈՒԻՐԷՆ ԵՒ ՄԻՀՐԱՆ

**ՄԻՀՐԱՆ** (եկաւ միջիք դռնով գլխարկը շպոտեց մի  
կողմ)։—Ա՛, դաւաճանութիւնն... դաւադրութիւնն:  
Ես այդ տեսնում եմ: Ես այդ տեսնում եմ: Ես  
ձեր դէմքերից եմ հասկանում: Ակնյալուի դաւա-  
դրութիւն: Դէմ, խնդրեմ. էլ մի ուշացնէք: Եղ-  
բայր և քոյր միացել էք իմ դէմ: Դէմ, դուք այդ  
ծածկել չեք կարող. խնդրեմ պարզ եղեք, ազնիւ,  
շիտակ: Ասացէք ինձ՝ ի՞նչ գաղտնի խորհուրդ էրք  
անում:

**ՍՈՒԻՐԷՆ.**—Խաղաղվիր, Միհրան: Դու գիտես,  
որ արժանաւորին վնահատել—այդ շատ լաւ գի-  
տէ Սուրէնը:

**ՄԻՀՐԱՆ.**—Ա՛, հասկանում եմ. ամենանճւրը  
քաղաքականութիւն, ամենաքննքյշ կերպով ար-  
ձակված ակնարկութիւն, այսինքն թէ՝ ես ձեր  
աչքում ոչ մի արժէք չունեմ: Արգեօք ճիշտ չեմ  
հասկացել ձեր միաբը. դէ ասացէք, որ այդ չորհ-  
քըն էլ չունեմ:

**ՍՈՒԻՐԷՆ.**—Բայց դու այդպէս պոնկված խօ-  
սելով կարող ես տանուլ տալ քո դատը:

**ՄԻՀՐԱՆ.**—Այն, իմ արդար դատը:

**ՍՈՒԻՐԷՆ.**—Ոչ ոք ոչինչ չի ասում. միայն  
թէ՝ եթէ սառնասրտութեամբ և համբերութեամբ  
խօսելու լինեա, այդ աւելի օգուտ կըբերի քեզ:

**ԶԱՐՈՒԻ.**—Պօէտ է... չի կարող չտաքանալ:

**ՄԻՀՐԱՆ.**—Ի՞նչ, հեզնանք...

**ԶԱՐՈՒԻ.**—Իհարկէ, Միհրան:

**ՄԻՀՐԱՆ.**—Դու ինչ ես ասում:

**ԶԱՐՈՒԻ.**—Որ ամեն մի խօսքդ պէտք է կըշ-  
ուած և ասված լինի խոր մտածելուց յետոյ, որ  
չլինի թէ առողջ բանականութեան հակառակ լինի:

**ՄԻՀՐԱՆ.**—Հըմ, տէր Աստուած... սա էլ է  
ինձ խորհուրդներ տալիս, սա...

**ԶԱՐՈՒԻ.**—Ի՞նչ է... ինձ չես հաւանում:

**ՄԻՀՐԱՆ.**—Հըմ, հարցնում է... Վաղուց եմ  
նկատել, որ դու պատրաստվում ես ապստամբվել  
իմ դէմ: Դու նոյն խոկ չես էլ հետաքրքրվում, թէ  
իմ գրիչն ինչ սոեղծագործութիւններ է անում:  
Ամբողջ օրիորդութիւնն է հետաքրքրվում ինձնով:  
Հարցնում է՝ «ինձ չես հաւանում»:

**ՍՈՒԻՐԷՆ.**—Յետոյ ասում են՝ պօէտննըը  
գեղեցկութիւնով ոգեորվում են:

**ՄԻՀՐԱՆ** (այդ խօսքից որպէս թէ ոգեորվեց):—  
Ա... այն, Զարու, ես քեզ սիրում եմ:

**ԶԱՐՈՒԻ.**—Եթէ այդպէս է, ուրեմն խելքդ  
գլխիդ հաւաքիր և ականջ գիր թէ ինչ պիտի ասեմ:

**ՄԻՀՐԱՆ.**—Ահա, տեսաք ինչպէս սառ ջուր  
ածեց գլխիս: Այստեղ կարող է ոգեորութեան մա-

սին խօսք լինել։ Այդպէս է իս ամբողջ կեանքը։  
Մի ըոպէ հանգստութիւն չունեմ քո քրոջ ձեռքից։  
Նա ինձ հալածում է... նա ինձ չի թողնում ամ-  
փոփկել... նա չի թոյլ տալիս, որ միտքս սաւառնի,  
թոյչի եթերի մէջ... նա խփում է, կոտրտում  
երեակայութեանս թևերը և սպանում ինձ, իմ միտ-  
քը, իմ մնւզան։

**ՍՈՒԻՐԷՆ.**—Իս քոյրը իրաւունք ունի։ Գո-  
վելի և ինելօք բան է, երբ մարդ ինքը չափում է,  
հասկանում և ըմբռնում իր ոյժը։

**ՄԻՀՐԱՆ.**—Կամենում էք ասել, որ ես ու-  
ժիցս բարձր բաներին եմ ձեռնարկում։

**ԶԱՐՈՒԻ.**—Բայց դու ոչ մի նկատողութիւն,  
ոչ մի տեղի ակնարկ իսկ չես ընդունում։

**ՍՈՒԻՐԷՆ.**—Իսկ այդ բանը, խոստովանիք Մի-  
հրան, ինչք ունեցողի համար մեծ պակասութիւն է։

**ԶԱՐՈՒԻ.**—Հօ դու չես կարող պնդել, որ  
ամեն ինչ կատարելութիւն է։

**ՄԻՀՐԱՆ.**—Շատ լաւ, թող լինի այդպէս։  
Թող ես մի կատարելութիւն չլինեմ, Ուրեմն ինդ-  
րեմ սասցէք, ինչ պակասութիւն ունեմ ես։

**ՍՈՒԻՐԷՆ.**—Դիմիք ուրեմն առողջ կրիտիկայի։  
ՄԻՀՐԱՆ. —Կրիտիկա, հըմ, կրիտիկա...

Լաւ է, եթէ քննադատը քեզ հասկանայ, բայց այդ  
ապուշերը ինձ չեն հասկանում։

**ՍՈՒԻՐԷՆ.**—Ահ, հիւանդ երեակայողների  
հսարած գատարկ ֆրազ, Խօսեցէք մարդու լե-  
զուով և ամենքը ձեղ կը հասկանան։

**ՄԻՀՐԱՆ.**—Բայց միթէ պօէտը կարող է  
խօսել հասարակ, գոհէիկ լեզուով։

**ՍՈՒԻՐԷՆ.**—Ազա ում համար էք դուք պօէտ,  
որ մենք ձեղ չհասկանանք։ Եւ ինչ էք դուք, եր-  
կընքից էք ընկել, մի ասուազ էք։

**ՄԻՀՐԱՆ.**—Բայց բանաստեղծին լաւ հաս-  
կանալու համար, պէտք է մի փոքր էլ ինքդ բա-  
նաստեղծ լինես։

**ՍՈՒԻՐԷՆ.**—Սրան ես խօսք չունեմ։

**ՄԻՀՐԱՆ.**—Զեղ յայտնի է, որ ես մի քանի  
սալններում կարդացել եմ իմ բանաստեղծութիւն-  
ներից և ահագին Փուրօք եմ գործել։

**ՍՈՒԻՐԷՆ.**—Ուրիշ կերպ ասած՝ նրանք քեզ  
ծափահարել են քաղաքավարութեան համար։

**ՄԻՀՐԱՆ.**—Ի՞նչ...

**ՍՈՒԻՐԷՆ.**—Այո, սիրելիս, խորամանկ տան-  
տէրը իր կեղծ հիւրասիրութիւնը զիմակաւորելու  
համար աղմուկ է բարձրացրել, որ իր երեկոյթը  
նման երեկոյթներից գերազանցի։

**ԶԱՐՈՒԻ.**—Այո, և չինի թէ տապարվի։ Ես  
հաւատացած եմ, որ նոյնիսկ շատերը յօրանցել են  
կամ քսուփով զբաղվել։ Ճանաչում ենք այդ ի-  
րար ջգուռ երեկոյթ սարքողներին։

**ՄԻՀՐԱՆ.**—Լոիր, ասում եմ, Ամենալաւ  
գրական ճաշակ ունեցողներն են ձես ուղղել և  
շնորհաւորել, երբ հարցը եմ հաւանում են ինձ։

**ՍՈՒԻՐԷՆ.**—Իհարկէ, անկեղծ ճշմարտութիւնը  
երեսիդ ասելը դժվար է եղել նրանց համար։ Ան-

զաւակի տունը, ոչ: Թող գոնէ մենք ունենանք  
մի համեստը, մի փոքրը, բայց որի մասին երկու  
կարծիք չըլինէր:

ՄԻՀՐԱՆ.—Այդ միայն գուք էք, որ քոյր

ու եղբայր միացել էք ինձ հալածելու, տապալե-  
լու և յուսահատեցնելու համար:

ՍՈՒՐԵՆ.—Մխալվում էք: Ես ինքս ասում  
եմ քրոջս, որ չպէտք է յուսահատվել: Անշուշտ  
մի օր կըյատնի մի հարուստ ապրոշ, որ ձեզ  
փող կըտայ, կըհրատարակի ձեր գրածները այն  
տենչից բռնված, որ իր անունը մի գրքի վրա  
տպագրված տեսնի:

ՄԻՀՐԱՆ.—Ոչ, այդպիսի մի մեկնասի դու  
չունես իրաւոնք ապուշ կոչելու: Ես նրան կըկո-  
չեմ խելքի ծով, ես կըյօրինեմ նրա անունին մի  
ոգեորված ձօն. ես նրան ինձ հետ կանսմահացնեմ.  
ես նրան կըբարձրացնեմ ինձ հետ Պառնասի գա-  
գաթը:

ԶԱՐՈՒՀ.—Ո՞ւր է:

ՄԻՀՐԱՆ.—Այդ կըլինի, այդ երազ չէ...  
Այդ նպատակով ես մի քանի այցելութիւններ եմ  
անելու:

ՍՈՒՐԵՆ.—Մի ժամանակ ես էլ էի գրում:  
Վիկտօր Հիւգօն ասում է՝ ով չէ երիտասարդ ժա-  
մանակ ոտանաւոր զբել: Բայց ես վճռեցի լի-  
նել կամ Շէքսպիր, կամ ոչինչ, և բոլոր իսկը-  
զանքս թափեցի կրակը: Ի հարկէ, ես քեզ-  
նից չեմ պահանջում, որ քո տունը մի ուխ-  
տատեղի լինի, ինչպէս Մտրադֆորդի մեծ

ՄԻՀՐԱՆ.—Մպասեցէք: (Խմբովիցախօն).

Մքանչելի գայլալիկով վարդի ծնունդն է  
Փառարանում մանուկ սոխակ.

Անկեփետուր թեկիներով սաւանում է

Զինջ երկնքում մահու հրեշտակ:

Վարդը թիի մէջ թաքնված երազում է

Իր սոխակին,

Իր երկնային ուղեցոյցին սպասում է

Անմեղ հոգին...

Սա էլ է վատ:

ՍՈՒՐԵՆ.—Մի-մի անգամ շատերին է յա-  
ջողում: Անգամար գատարկամիտ ոտանաւորներ  
շարագրել—չի նշանակում լինել բանաստեղծ: Իս-  
կական բանաստեղծին ոչ թէ պատահարար է յա-  
ջողում, այլ միշտ: Հանճարը յանգերի և վան-  
կերի եռեկից չէ ընկնում, նրանք իրանք իրանց  
են գալիս և այն՝ սքանչելի ներդաշնակութեամբ:  
Կոչումն ունեցող պօէտը միանգամից է հմայում  
և զմայեցնում մեղ: Նա ոգեսրում է, կաշկան-  
դում մեր միտքը հոգեբանութեան խորութեամբ,  
ֆանտազիայի սքանչելիութեամբ, քարակտերիա-  
տիկայի զանազանակերպութեամբ: Նրա զիւթա-  
կան գաւազանի զօրութեամբ մեր հոգւոյ առաջ  
ճախրում է ինչը զեղեցկութիւնը: Նրա փիլսո-  
փայութեան խորութիւնը, մտքերի աննման, ըս-

քանչելի և բաղմագունի տեղատվութիւնը և մակընթացութիւնը, բնութեան գաղտնիքների ըմբռունողութեան հեղեղը առնում տանում է մեզ աշխարհից աշխարհ։ Նրա գրչով խօսում է ոչ մահկանացուն, այլ Պառնասի բոլոր աստուածութիւնները, երկնային բոլոր մուսաները։ Նա նման է հսկայ նժոյգի յաղթական փառահեղ երթին, որը գիտէ ում է կրում իր վրա և ուր է գնում։

ՄԻՀՐԱՅՆ. — Իսկ մենք։

ՍՈՒԻՐԵՆ. — Մոլորված մի գառն, որ բառանչում է անօդնական... և միմիայն խղճահարութիւն ծնեցնում տեսնողի մէջ։ Բոնել էք մի 10-20 բառերի պոչից և հոլովում նրանց անդադար վերից վար, վարից վեր, աջից ձախ, ձախից աջ։ Ի՞նչ կը ինի ձեր գրութիւնը, եթէ ես խլեմ ձեզնից այս բառերը (կարդաց գրանից հանած մի թուղթ)։ Երկինք, երկիր, աստղ, արե,

Ո՞հ, ծառ, անտառ, զով, տերեւ։

Ա՞խ, ձիւն, հրեշտակ, հրէշ և գեւ,

Թոչուն, մածուն, սէր, անձրեւ։

Սոխակ, գարուն, գետակ, լոյս,

Համբոյր, վտակ, ծաղիկ, բոյս։

Ծիծառ, շուշան, վարդ, սար, յոյս,

Ոգի, բոքի, աղջիկ, կոյս։

Ծով, վիշտ, զօղանջ, վեհ կամար,

Կատու, լուսին, խոտ, բանջար։

Եղթայ, պսակ, բարի, չար,

Գօէտ անձար, անպատճառ։

Բաւական չէ արդեօք, որ ձեր երգը երգված լինի, որ դուք իսկոյն գրիչը վայը դնէք և զինաթափ լինէք։

ՄԻՀՐԱՅՆ. — Հեռացէք այս տեղից... Մի կապէք իմ մուզայի ճանապարհը։ Թողէք նա գայ։ Թողէք նա ազատորէն թռչի ինձ մօտ։ Այս ըսպէ-ին ես կամենում եմ ստեղծագործել։

ՈՈՒԻՐԵՆ. — Ե՞ն, բարի գիշեր։ (Ժամացոյցին նայեց և կողմ)։ Իմ էլ մուզայիս գալու ժամանակն է։ Ինչո՞ւ է ուշանում։ (Գնաց միջի գոնով)։

ԶԱՐՈՒԻ. — Եթէ ես քեզ հարկաւոր լինեմ, ձայն տուր, ես խոհանոցումն եմ,

ՄԻՀՐԱՅՆ. — Ա՞հ, քո ձենձերային հոտով մի կաշկանդի իմ մուզայի ճանապարհը։

ԶԱՐՈՒԻ. — Հերիք զլուխս տանես, ի սէր Աստուծոյ, մուզա, մուզա։ Ահա, համեցէք (բացեց պատուհանը)։ Եթէ քո մոզիդ սատկում է, չի կարողանում ներս գալ գոներով, թաղ այստեղով մանի։ Է՞յ, մուզա, համեցէք։ (Գնաց աջ կողմ)։

### ՏԵՍԻԼ 3.

ՄԻՀՐԱՅՆ, ՄԻՄՄԻ և ԵՐԲԵՑՆ ԶԱՐՈՒ

ՄԻՀՐԱՅՆ. — Օ, վերջապէս։ (Փորձեց գրել)։ Ֆնւ, գրիչս ձեռքս եմ առնում թէ չէ միտքս խաւարում է... (Ելաւ, լընեց)։ Ո՞րտեղ ես, մուզա։ Ահա գութ մուզա։

ՄիՄՄի<sub>(պատուհանից)</sub>—Ա՛ս, սը՛ս... ես այս-  
տեղ եմ...

ՄիՀՐԱՆ.—Ա՛... դու գալի՛ս ես, դու եկար...  
եկար, իմ ցանկալի, իմ հրաշալի, դիւթիչ, հը-  
մայիչ ոյժ. դու եկար...

ՄիՄՄի.—Եկայ, եկայ... դժվար է բարձրա-  
նալը. տուր ինձ մի աթոռ: (նա տուաւ. Միմին հ-  
րեաց):

ՄիՀՐԱՆ.—Ողջոյն քեզ, ով մուզա... Ներս  
եկ, ներս եկ:

ՄիՄՄի.—Ինչքան սպասեցնել տուիր ինձ...  
դու մոռացել ես, որ ես խօսք տուի պատուհանով  
մտնել: Ֆու, այս կինը քեզնից խելօք էր:

ՄիՀՐԱՆ.—Դու գալիս ես վերևից, թոշե-  
լով, սաւառնելով տիեզերքի անհունութեան մէջ:

ՄիՄՄի.—Իշազէս չէ: (Թւղում է մտնել): Օգ-  
նիր ինձ, չես տեսնում, որ դժվարութեամբ եմ  
մտնում: Այնպէս էլ փէշերա երկար են. անպի-  
տան մօդան միմիայն անյարմարութիւններ է  
ստեղծում մեզ համար: Ի՞նչ ես բերանդ բաց ինձ  
նայում... օգնիր էլի, չես լսում: Գլխարկս կը-  
մտնի պատուհանով... Ոչինչ... լաւ է:

ՄիՀՐԱՆ (օգնեց):—Ե՛կ, օ, Եկ:

ՄիՄՄի.—Ել լաց մի լինիր, գալիս ենք: Այդ  
ի՞նչ հոտ է... երեկի ընթրիք էլ կունենանք. ես  
այնպէս ուտել եմ ուզում..., Լաւ հոտ է:

ՄիՀՐԱՆ.—Այդ խոհանոցից է փչում... կինս  
այստեղ կերակուր է պատրաստում:

ՄիՄՄի.—Ա՛խ... ի՞նչ... Բաց թող... (Յետ  
գնաց): ինչպէս. դու պասկւած ես, դու կին ունես:  
ՄիՀՐԱՆ.—Այո:

ՄիՄՄի.—Այ, այ, այ: Իսկ դու ինձնից այդ  
բանը ծածկեցիր: Ամօթ քեզ համար, ես քեզնից  
չէի սպասում այդ:

ՄիՀՐԱՆ.—Ի՞նչ է:

ՄիՄՄի.—Ինձ ներս ես կանչում, իսկ այն-  
տեղ թաքցնում ես ուրիշի...

ՄիՀՐԱՆ.—Մուզա, մուզա, ազաչում եմ,  
խնայիր ինձ, այդ ի՞նչ անպատճ յանդիմանու-  
թիւններ ես անում քո պօէտին: Ինչ էլ որ լինի,  
չէ որ ես քո ընտրեալն եմ, քո պօէտը:

ՄիՄՄի.—Պօէտ... դու պօէտ ես:

ՄիՀՐԱՆ.—Այո, մի չքաւոր պօէտ, որ ունի  
սակայն հարուստ երեակայութիւն:

ՄիՄՄի.—Իսկ ես կարծում էի, որ դու մի  
հարուստ բանտիէ ես: Բայց ասա խնդրեմ, պօէ-  
տի ինչին կըսազէր պասկվելը:

ՄիՀՐԱՆ.—Այո, մի յիմարութիւն է, որ  
արել եմ: Ներս եկ, ոդի ներշնչիր ինձ, թէ չէ նա  
ինձ սաստիկ խանգարում է:

ՄիՄՄի.—Ո՞վ:

ՄիՀՐԱՆ.—Կինս. նա շատ չարն է:

ՄիՄՄի.—Նա ինձ հետ կոխւ չի անկի:

ՄիՀՐԱՆ.—Ոչ, մուզա: Ես նրա վրայ բար-  
կացած եմ. ես նրան փախցրի, նո էլ չի խան-  
գարիլ մեզ. ներս մտիր, մուզա:

**ՄԻՄՄԻ.**—Գիտես ինչ կայ: Քո անունը ի՞նչ է:  
**ՄԻՀՐԱՆ.**—Բայց քո ինչին է պէտք իմ ա-  
նունը...

**ՄԻՄՄԻ** (ինքնիրան):—Սխալված չինսմ, սա-  
տանան տանի: (Նրան): Դու ի՞նձ էիր սպասում:

**ՄԻՀՐԱՆ.**—Ախ, ոգի քաղցրիկ, ի հարկէ...  
**ՄԻՄՄԻ.**—Իսկ եթէ յանկարծ քո կինն ինձ  
նկատի այստեղ:

**ՄԻՀՐԱՆ.**—Ի՞նչ ես ասում, մուզա: Հասա-  
րակ մահկանացուի աշքերը քեզ ինչպէս կարող  
են տեսնել:

**ՄԻՄՄԻ.**—Նա վատ է տեսնում:

**ՄԻՀՐԱՆ.**—Ո՞վ:

**ՄԻՄՄԻ.**—Քո կինը:

**ՄԻՀՐԱՆ.**—Նրա միտքը կոյր է:

**ՄԻՄՄԻ.**—Նա կոյր է, ապա ինչու ինձ իս-  
կոյն չասացիր: Դէ օգնիր ինձ, թէ չէ զիշերա-  
պահը կանգնած՝ այս կողմն է նայում:

**ՄԻՀՐԱՆ** (օգնեց):—Մուզա, մուզա... քո  
ձեռքերը բոլորովին սառել են:

**ՄԻՄՄԻ** (մտաւ սենեակ):—Բարի երեկոյ... (Ա-  
թոռն էլ քաշեց, թուշը դէմ արաւ):

**ՄԻՀՐԱՆ** (համբուրեց ձեռքը):—Օ՛, ինչպէս եմ  
կարօտել քեզ, ինչպէս... Այդ ի՞նչ է, բէդիկիւլ  
էլ ունես:

**ՄԻՄՄԻ.**—Այս, թաշկինակի համար... ես  
շուտ-շուտ հարրուխ եմ ընկնում:



**ՄԻՀՐԱՆ.**—Հարրուխ... ի՞նչ թուրիսն ես  
եղել դու, մուզա:

**ՄԻՄՄԻ.**—Շնորհակալ եմ քո կօմպլիման-  
ների համար (կնիկւն): Դու ինձ անկեղծ կերպով  
ես սիրում... դու ինձ չես խարում: (Թուշը դէմ  
արաւ):

**ՄԻՀՐԱՆ.**—Ախ, իմ անմահ ոգի... ես ինչ-  
պէս կարող եմ համարձակվել...

**ՄԻՄՄԻ.**—Ախ, մի ասիլ... (կողմ) ի՞նչ յիմարն  
է, ոչինչ չի հասկանում... (Նրան). դուք բոլոր  
տղամարդիկդ էլ այդպէս էք: Առաջ անկեղծ սի-  
րող էք ձեանում, իսկ յետոյ խարում էք մեզ և  
թշուառացնում: Ահա ես, ամենքն ինձ արհա-  
մարհանքով են նայում, բայց ոչ ոք չի ասում,  
որ ես մի անմեղ զոհ եմ, մի անօգնական, խար-  
ված աղջիկ:

**ՄԻՀՐԱՆ.**—Ոչ, ոչ, Աստուած մի արացէ.  
դու ինձ համար մի սրբութիւն ես:

**ՄԻՄՄԻ.**—Այ այդպէս քանիսն են ինձ  
խարել: Սուտ-սուտ խօսք են տալիս մինչև մահը  
հաւատարիմ լինել, պասկվել, բայց յետոյ մէկ էլ  
տեսար՝ փախան և այնպէս կորան, որ կարծես  
ծովի տակը սուզվեցին: Երկի դու էլ վերջինը չես,  
խարել բերել ես ինձ այստեղ... չէ՞ որ ես այն-  
պէս հեշտութեամբ եմ հաւատում տղամարդկանց:  
(Թուշը դէմ արաւ, կողմ): Ի՞նչ յիմարն է:

**ՄԻՀՐԱՆ.**—Երդվում եմ անմահ Հոմերոսի և  
Շէքսպիրի ոգիներով, որ դու իմ աստուածուհին

ես: Ահա ես չոքում եմ քո ասած. ողջին քեզ,  
ով մուզա, գրկիր ինձ:

**ՄիՄՄԻ.**—Շէկ Գասպարը քո ի՞նչն է:

**ՄիՀՐԱՆ.**—Ինչպէս... դու Շէքսպիրին չե՞ս  
ճանաչում. ուրեմն դու բոլորովին մի նոր, մի  
մատաղահաս, մի թարմ ոգի ես: Այդ ես հասկա-  
նում եմ: Մուզա, չէ՞ որ ես էլ նոր շկօլայի  
պօէտ եմ:

**ԶԱՐՈՒԻ** (միշտ աջից՝ եկաւ գոզնոց կապած):—  
Միհրան (Միմի թագնվեց պահարանի ետևում և այդ  
միշտ, երբ մտնում է Զարուն), դու տապակածը սոխով  
ես սիրում:

**ՄիՀՐԱՆ.**—Հեռացիր, այս հաճդիսաւոր բո-  
պէին սոխն էր պակաս...

**ԶԱՐՈՒԻ.**—Իսկի էլ իրաւունք չունես այս-  
տեղից ինձ փախցնելու: Ը՞ն, սրան նայեցէք.  
Կէսօրից յետոյ աղօթք անող է դուրս եկել. դեռ  
բարկանում էլ է: Յիմար: (Քնաց):

**ՄիՄՄԻ.**—Ա՛խ, ախ, օգնիր ինձ, պէտք է  
փախչել. նա հօ մի կրակի կտոր է. նա ինձ կը-  
ջարդի... ես թոյլ եմ և կոհաներում միշտ ծեծ-  
փում եմ:

**ՄիՀՐԱՆ.**—Բայց դու մի ոգի ես... նրանից  
ինչո՞ւ ես վախճառում:

**ՄիՄՄԻ.**—Ա՛խ, ես քնքոյշ եմ, նազելի: Դու  
չկարծես, թէ ես հասարակ դասակարգից եմ. ոչ,  
ես արիստօկրատ ընտանիքից եմ, Աստուած վկայ.

կամենում ես՝ կարող եմ ցոյց տալ իմ պասպօր-  
տը: Նայիր ձեռքերիս:

**ՄիՀՐԱՆ.**—Այո, դու մի ոգի ես, թեթև,  
ինչպէս էֆերը:

**ՄիՄՄԻ.**—Դու ինձ խարեցիր. դու ասա-  
ցիր նա կոյր է, մինչդեռ նա հիմնալի աչքեր  
ունի. բայց սոխը կարող է վասել նրանց:

**ՄիՀՐԱՆ.**—Մուզա, քո լեզուին ի՞նչ սազ  
կըգայ սոխի մտսին խօսել:

**ՄիՄՄԻ.**—Ա՛խ, գլուխս էլ կըլուանամնըա-  
նով. ես սոխ շատ եմ սիրում, մանաւանդ լորիի  
հետ: Դու պասվայ իւղը փորձել ես քացախի  
հետ լորիի վրա, սոխն էլ կոտորած: Ուտելու  
կողմից ես խիստ քաղկենի ճաշակ ունեմ, (ուտել  
ցոյց առավի, լպատեց մտակը) ը՛մ, ը՛մ, ը՛մ:

**ՄիՀՐԱՆ.**—Մուզա, հրաշալի մուզա... (ե-  
լաւ) այժմ ես բոլորը հասկացայ:

**ՄիՄՄԻ.**—Ի՞նչ հասկացար:

**ՄիՀՐԱՆ.**—Որ ես մի անքանքար, հիւանդ,  
երազող և երկակայողի մէկն եմ, որ իմ մէջ չկայ  
կոչումն իսկական պօէտի, որ դու եկել ես մի-  
միայն իմ անշնորհքութիւնը ծաղրելու:

**ՄիՄՄԻ.**—Զէ, շէկ-Գասպարը վկայ, ես կա-  
տակներ շատ եմ սիրում. դու չե՞ս սիրում:

**ՄիՀՐԱՆ.**—Մուզա, մուզա, մնդութ, ան-  
խիղճ մուզա, ինչո՞ւ ես ինձ դատապարտում  
մահվան:

**ՄԻՄՄԻ.**—Աստուած մի արասցէ, ինչե՞ր եռ  
քարբանչում... ի՞նչ մահվան մասին է խօսքդ:

**ՄԻՀՐԱՆ.**—Այս, մուզա, ես կարող եմ անձ-  
նասպանութիւն գործել: Այդ սարսափելի հիաս-  
թափութեան ֆինալը կարող է լինել միմիայն  
մահը: (Բոնեց ականջները):

**ՄԻՄՄԻ.**—Տէք Աստուած, փողոցում դու  
կատակներ էիր անում, կամթում էիր ինձ... իսկ  
այստեղ լաց ես լինում... Արդեօք սխալված  
չեմ...

**ՄԻՀՐԱՆ.**—Ո՛չ ոչ դու չես սխալւում...  
ինչո՞ւ ես դատապարտում ինձ մահվան:

**ՄԻՄՄԻ.**—Ես ի՞նչ մեղ ունեմ, Տէք Աստուած:  
Կամենում ես, ես իսկոյն յետ կը գնամ: Ապրում  
էք մարդ ու կի՞ն՝ ապրեցէք հաշտութեան և եր-  
ջանկութեան մէջ: Չի՞նի թէ յետոյ ինձ մեղքի  
տակ քցէք: Միթէ ես կը կամենամ, որ քո կի՞նը  
անբաղդանայ: Ո՛չ, երբէք: Ես այս միւս աներես,  
անսամօթ լկտիներից չեմ, որ ուժով ընկնեմ ու  
փաթաթվեմ սրա-նրա ըլընքին, թէ հը, եկէք  
տարէք ինձ... ոչ, երբէք: Ես, որքան էլ թոյլ լի-  
նեմ, նոյնքան ինքնասէք եմ և հպարտ: Թողէք ինձ:

**ԶԱՐՈՒ (եկաւ).**—Միհրան, շուտ արա վազիր  
մի փունտ հաց առ: Դու ամեն բան մոռացել ես  
քո էդ յիմար ոտանաւորներիդ պատճառով: Շուտ  
արա, քո գլխին բնաւ խելք չի մնացել:

**ՄԻՀՐԱՆ.**—Ես կուշտ եմ, ուտել չեմ ուզում:

**ԶԱՐՈՒ.**—Դու չես ուզում, ես եմ ուզում:  
Եթէ դու երեակայութիւններով կարող ես փորդ  
կշտացնել, ներիք, ես չեմ կարող: Ես մայր եմ,  
կրծքով երեխայ եմ կերակրում: Շուտ արա: (Քնաց):

**ՄԻՄՄԻ.**—Հի՞... դու երեխայ էլ ունես. չե՞ս  
ամաչում. թիւ: Ուս կոտրվէք, թէ այստեղ ոտք  
դնէի, եթէ իմանայի, որ երեխայ ունես: Չե՞ս ամա-  
չում, ամուսնացած մարդ, երեխայի տէր և այդ-  
պիսի անամօթ բանե՞ր... Ո՞րտեղ ընկայ ես... Օրս  
էլ կորաւ, թիւ...

**ՄԻՀՐԱՆ.**—Մուզա, ինչո՞ւ ես այդպէս ան-  
հանգիստ լինում. աղաչում եմ, բաց թերդ, առ  
ինձ, տար Պառնաս:

**ՄԻՄՄԻ.**—Տար ինձ... հեշտ է ասելը, իսկ  
տոմսակի փող որտեղից գտնենք:

**ՄԻՀՐԱՆ.**—Մուզա, մենք կը թոչենք եթերքի  
մէջ:

**ՄԻՄՄԻ.**—Ոչ, ես սիրում եմ ճանապարհոր-  
դել երկաթուղիով: Երդվել եմ երբէք օդապարի-  
կով չճամպորդել:

**ԶԱՐՈՒ (եկաւ):**—Միհրան, մի րոպէ երեխա-  
յին օրօրիր... թէ չէ կօտլէաներս այրվեցին: (Քնաց):

**ՄԻՄՄԻ.**—Գնա օրօրիր փոքրիկին. նա խեղճ  
է, լաց կը լինի. չը որ, ոչ բարով, հայր ես: Ֆռւ:

**ՄԻՀՐԱՆ.**—Բայց...

**ՄԻՄՄԻ.**—Էլ ի՞նչ բայց: Եթէ դու քո զաւա-  
կին ծնողի սիրով չես սիրում, ինչպէս կարող ես  
սիրել ինձ:

ՄիջրԱՆ.—Դու միամիտ կաց, մուզա. կիսս  
ծուլութիւն է անում. նա պէտք է կաթ տայ երե-  
խային... ևս այստեղ ի՞նչ գործ ունեմ:

ՄիջՐՄԻ.—Լոյր... լսել և տանել չեմ կարող:  
ես էլ եմ զաւակ ունեցել, և քեզ նման նրա ան-  
սիրտ հայրն էլ քցեց գլխիս ու փախու:

ՄիջրԱՆ.—Դռւ... զաւակ...

ՄիջՐՄԻ.—Այո... երբ առաջին անգամ ես  
խարսիցի, իմ յիմար սիրոյ պտուղը մի գեղեցիկ  
երեխայ էր. բայց նա արդէն մեռել է: Բնդ  
մօտ քո զաւակը: Բեր տեսնեմ, ես երեխայ շատ  
եմ սիրում:

ՄիջրԱՆ.—Բայց դու ինքդ հէնց սի մանուկ  
ես, իմ հոգի:

ԶԱՐՈՒ (եկաւ):—Այնքան արիք կօտլէտներս  
էլ այրվեցին: Քանի միտս է, չմոռանամ ասելը:  
Վաղն առաւօտ անպատճառ թէյ ու շաքար գնիր:  
Լուսմ ես:

ՄիջրԱՆ.—Գնա, լաւ:

ԶԱՐՈՒ.—Դու զնում ես էստեղ-էնտեղ ես  
մնում... ես հօ չեմ կարող առանց թէյի մնալ:  
Հա, չմոռանամ. շաքարը կոտրած լինի, մաշինի  
չլինի, նա ճարպի համ է տալիս: Հացը բերել ես,  
Չէ: Դէ դնա էլի: Ի՞նչ ես ապել: (Գնաց):

ՄիջրԱՆ.—Մուզա, դու նրա ասածներին  
ականջ մի դնիլ. նա մի քիչ ցնորված է:

ՄիջՐՄԻ.—Ընդհակառակը, ես նկատում եմ,  
որ նա շատ լաւ տանտիկին է: Ես տնտես կտ-

նանց շատ լոյ սիրում: Նրանք լաւ ճաշակ են ու-  
նենում: Հասգուցեալ իմ մայրը կաղամբի երևելի  
կարկանդակներ կըշինէր: Քո կինս էլ գիտէ: Եւ  
ի՞նչ տեսօք կին է նա. նա դեռ բոլորովին նո-  
րատի է, նա ինձնից շատ գեղեցիկ է: միթէ ինձ  
բերել ես նրա մօտ ծաղրելու:

ՄիջրԱՆ.—Հա, հա, հա... Մուզա, մուզա,  
դու բոլորովին ինձ խենթի տեղ ես գնում:

ԶԱՐՈՒ (եկաւ):—Միջրան, ձայն չհանես.  
տանտէըը եկել է տան վարձի համար. ես նրան  
ասացի դու տանը չես: Լուսմ ես, քննած. չհազար,  
ինձ նրա մօտ սուտ դուրս չըերես: (Գնաց):

ՄիջՐՄԻ.—Այդ ի՞նչ է, դու նոյն իսկ տան  
վարձի փող էլ չունես: Ապա ինձ ի՞նչ մտքով ես  
բերել, դու կարծում ես ես այնքան կըստորանամ,  
որ ձրի թրկ կըգամ սրա—նրա մօտ:

ՄիջրԱՆ.—Բայց ես քեզ կըձօնեմ իմ քնարը,  
ես քո անունին կըյօրինեմ մի երգ, մի երգ մա-  
քուր և սրբազն, որը դու ինձ կըներջնչես:

ՄիջՐՄԻ.—Շատ հարկաւորս է: Դու պէտք է  
երգ յօրինես, երբ ես քաղցած եմ: Տնւր ինձ մի  
քիչ փող, և ես կըգնամ այստեղից:

ՄիջրԱՆ.—Բայց, մուզա, դու փողը ի՞նչ  
ես անում:

ՄիջՐՄԻ.—Ի՞նչ պիտի անեմ. այ նայիր, կօ-  
շիկներիս կրունկները ծովել են:

ՄիջրԱՆ.—Բայց ուր մուզան և ուր կօ-  
շիկներ:

**ՄԻՄՄԻ.**—Այս, քեզ համար հեշտ է. դու տանը կուշտ նստած ես, իսկ ես ամբողջ օրերով բռովարները և խանութների առաջներն եմ չափչփում... հեշտ ես կարծում... Տներ ինձ փող:

**ՄԻՀՐԱՆ.**—Մուզա, ես քեզ չեմ հասկանում:

**ՄԻՄՄԻ.**—Ունե՞ս գոնէ մի քաղցր խմիչք:

**ՄԻՀՐԱՆ.**—Ի՞նչ խմիչք:

**ՄԻՄՄԻ.**—Այսպէս, կազդուրվելու համար, շարարեօք, արրիկոտին, կիրասօ, բէնեղիկաին:

**ՄԻՀՐԱՆ.**—Հաւատացիր, մուզա, ես ինքս կեանքումս զբանցից խմած չկամ:

**ՄԻՄՄԻ.**—Դէ գոնէ մի բաժակ գարեջուր, լիմօնադ...

**ՄԻՀՐԱՆ.**—Զկայ, Աստուած վկայ:

**ՄԻՄՄԻ.**—Հըմ... գուցէ ձեզնում ջուր էլ չկայ:

**ՄԻՀՐԱՆ.**—Զնւր, իսկոյն: (Պնաց աջ):

**ՄԻՄՄԻ.**—Մի աչքի ընկնող բան էլ չկայ, ու մարդ թոցնի: (Սեղանի արկղից մի բան գրանեց):

**ՄԻՀՐԱՆ** (բերաւ մի բաժակ ջուր):—Խմիր, մուզա... Այդ ի՞նչու ես շիռթված:

**ՄԻՄՄԻ.**—Ոչինչ... (Փորձեց խմիլ): Ա՛... (Պայուսակից հանեց թաշկինակ):

**ՄԻՀՐԱՆ.**—Ի՞նչ է:

**ՄԻՄՄԻ.**—Քացախ... ա... քացախ...

**ՄԻՀՐԱՆ.**—Քացախ... անկարելի է... (Փորձեց). Ֆու, իսկ որ քացախ: Ներիր, մուզա, ներիր ինձ... (Նստեցրեց ձնկանը):

**ԶԱՐՈՒԻ.** (Եկաւ):—Ո՞վ է վերցրել կոտէտիս քացախը: Սա ով է...

**ՄԻՀՐԱՆ** (Եկաւ ոտքի):—Հանգստացիր, Զարու... սա իմ մուզան է...

**ԶԱՐՈՒԻ.**—Սա... այս լիրք-անամօթը մուզամ... Ա՛խ, անամօթ, դու այդպիսի ամուսին ես եղել... դու քեզ մօտ ես բերել այս լրրին...

**ՄԻՀՐԱՆ.**—Զարու, Զարուհի... Աստուած սիրես, ուշքի եկ... դու կանգնած ես աստուածութեան առաջ...

**ԶԱՐՈՒԻ.**—Զայնդ կտրիր, անամօթ: (Միմմին բարձր): Դնւրս այստեղից, անզգամ, դնւրս, թէ չէ՝ այս ըստէիս կըյայնեմ ոստիկանութեան:

**ՄԻՄՄԻ.**—Բայց ես ի՞նչ մեղ ունեմ... երբ նա ինքն է ինձ ներս կանչել:

**ԶԱՐՈՒԻ.**—Իսկ դու ինքդ քոռացել ես, չես տեսնում նա կին ունի, երեխայի տէր է... դու նրա ինչիցն ես խարպել:

**ՄԻՀՐԱՆ.**—Զարու, Զարու... աղաջում եմ... նա քեզանից ծածկում է, որ իմ մուզան է...

**ԶԱՐՈՒԻ.**—Զայնդ կտրիր, անզգամ: Սրա համար էիր մեղ փախցնում, թէ մուզաս գալու է, մուզաս գալու է: (Միմմին): Դնւրս այստեղից, լիրը (մի բան փնտրելով), դուրս, թէ չէ՝ այս բուղէիս զլուխով կըջարգեմ:

**ՄԻՀՐԱՆ.**—Մուզա, մուզա, մի վախիր, սիրելիս, ես այստեղ եմ, ես չեմ թողնիր... (Կսոջը):

Ա՛լի դու, գոեհիկ, քաղկենի կին... ինչպէս ես համարձակում...

**ԶԱՐՈՒԻ** (Միմմին):—Հեռացիր այստեղից, թէ չէ այս բոպէիս մազերդ կըփետեմ, շորերդ կը պատուեմ...

**ՄԻՄՄԻ** (վախենալով փորձում է սպառնալիք տալ):—Շատ էլ ձենսերդ սի չափ քցէք. ձեզնից վախեցող չկայ: Զկարծէք թէ ես բոլորովին էլ անօգնական եմ: (Ասկեց երեխայի լաց):

**ՄԻՀՅԱՆ.**—Աստծոյ սիրոյն, մուզա, խառզազիր: Զարու, խելքդ գլխիդ հաւաքիր, գնա երեխին օրօրիր:

**ԶԱՐՈՒԻ.**—Գնա ինքդ, էլ համբերութիւնս հատաւ: Էս բոպէիս ես ցոյց կըտամ ձեզ, թէ ինչ խայտառակութիւն կըբերեմ ձեր գլխին: (Պատուհանից): Դոնապան.. գիշերապան, զինուորներ... ոստիկաններ... այստեղ... այստեղ... անառակութիւն... (Բանվեց մարդու հետ: Միմմին ուզում է փախչել):

**ՄԻՀՅԱՆ.**—Հա, հա, հա... զու գժվել ես, Զարու, Ասառւած վկայ, գժվել. զու՞չիս տեսնում, որ հա մուզա է... Լոիր: (Պատուհանի մեջ բոնեց կնոջ բերանը):

#### ՏԵՍԻ 4.

**ՄԻՀՅԱՆ, ՄԻՄՄԻ, ԶԱՐՈՒ և ՍՈՒՐԵՆ**

**ՍՈՒՐԵՆ** (այդ զիրքում մտաւ միջի դոնով և բրոնեց Միմմիի թեկից, ծածուկ).—Միմմի, զու այստեղ

ինչ ես անում, ինչպէս ես այստեղ ընկել. իմ պատուհանը միւսն է...

**ՄԻՄՄԻ.**—Ա՛խ, ես սխալված եմ... նա ինձ ուղում է ծեծել, բռնել տալ...

**ՍՈՒՐԵՆ.**—Իսկ ես պատուհանս բաց՝ քեզ եմ սպասում:

**ՄԻՄՄԻ.**—Ա՛խ, ազատիր ինձ, ասա, որ ես քո նշանածն եմ...

**ԶԱՐՈՒԻ.**—Ա՛մ, Սուրէն, զու եկար, եղբայր: Տես այստեղ ինչ անառակութիւն է, տես ում է ներս թողել... (Ասպակեց Միմմին): Ա՛ռ քեզ, անամօթ, առ քեզ: (Ուզում է շարունակել):

**ՍՈՒՐԵՆ** (բռնեց Զարուին).—Ի՞նչ ես անում, թշուառական:

**ՄԻՄՄԻ.**—Ա՛մ... ա... (հսկոյն բէղիկիւից հանեց փոշին, բամբակով քսեց երեխին) թաց ձեռքով... իմ երեսին..., (Ուզում է կռւել Զարուի հետ):

**ՍՈՒՐԵՆ** (չի թողնում և գրկում է Միմմին):—Խառզազիր...

**ՄԻՀՅԱՆ.**—Սուզա, մուզա, խելքի եկ, ինչը ես անում: Տես ում գիրկն ես մտել...

**ՄԻՄՄԻ.**—Բայց ես նրանն եմ... հասկանում ես... նա իմ...

**ՄԻՀՅԱՆ.**—Ա՛... զու ինձ դաւաճանում ես, Մուզա... սպասիր...

**ՍՈՒՐԵՆ.**—Ի՞նչ մուզա, յիմար... քեզ ասում են Միմմին իմ նշանածն է:

ԶԱՐՈՒԻ. — ՀԵՄ... ԵՄ... (ԿԱՔԱՅԱ) ԻՄ ԵՂԲՈՐ  
ՆՀԱՆՆԱԾԸ...

ՄԻՄՄԻՒ (Նոյն նրա առաջ): — Իմ պատուելիտալս...  
ՍՈՒՐԵՆ (ԹԿԱՆՑՈՎ տարաւ ՄԻՄՄԻՒ միջի դռնով):  
ԶԱՐՈՒԻ (ԿԱՔԱՅԱՆՆԵՐԸ ՄԻՄՄԻՒ ճամպեց և գնաց  
միջի դռնով):

ՄԻՀՇԱՆ (բարձր լացով): — Հա, հա, հա... ոչ, ոչ,  
այդ անկարելի է: (Բոնելով գլուխը նստեց), թռաւ,  
փախաւ իմ մուզան. նա եկել էր ինձ ներշնչե-  
լու... գարձեալ նրանք եկան խլեցին, թռեցրին  
նրան... ու ու... (Քնեց):

ԶԱՐՈՒԻ (մէջտեղի դռնով եկաւ): — ՄԻՌԱՆ, դու  
քնել ես. զարթիր, սիրելիս: (Զարթեցրեց նրան):

ՄԻՀՇԱՆ. — ՀԵՄ... ուր թռաւ նա... ուր  
գնաց...

ԶԱՐՈՒԻ. — Ո՞վ, իմ սիրելի:

ՄԻՀՇԱՆ. — Սա ով է պատուհանը բաց թռ-  
ղել... Տըորիր մէջքս...

ԶԱՐՈՒԻ. — Դու մըսել ես, սիրելիս... (Տըո-  
ռում է նրա մէջքը մինչ զարագոյր):

ՄԻՀՇԱՆ. — Այ, այ, այ... ինչ երազ տեսայ...





305

ՀՀ Ազգային գրադարան



NL0326006

ԳՐԱԴԱՐԱՆԻ Տ 20 ԿՈՂՈՒՅ

Վաճառություն են հեղինակի

<b>Մարգար Ճապան</b>	<b>պիէս</b>	<b>3 գործ.</b>	<b>.</b>	<b>.</b>	<b>.</b>	<b>50 լ.</b>
<b>Մկնձի Խառամճիքը</b>	<b>"</b>	<b>1 "</b>	<b>II տար.</b>	<b>.</b>	<b>.</b>	<b>20 "</b>
<b>Նամքի ճանաւուն</b>	<b>"</b>	<b>1 "</b>	<b>I "</b>	<b>.</b>	<b>.</b>	<b>20 "</b>
<b>Նոյն</b>	<b>"</b>	<b>1 "</b>	<b>II "</b>	<b>.</b>	<b>.</b>	<b>10 "</b>
<b>Խելագար Մինաս</b>	<b>"</b>	<b>1 "</b>	<b>.</b>	<b>.</b>	<b>.</b>	<b>20 "</b>
<b>Անկոչ եիւր</b>	<b>"</b>	<b>1 "</b>	<b>.</b>	<b>.</b>	<b>.</b>	<b>20 "</b>
<b>Շիւզի վարժապես</b>	<b>"</b>	<b>2 "</b>	<b>.</b>	<b>.</b>	<b>.</b>	<b>30 "</b>
<b>Փուշի երազը</b>	<b>"</b>	<b>1 "</b>	<b>.</b>	<b>.</b>	<b>.</b>	<b>20 "</b>

Մամուլի տակ են՝

Էլուսպապիացիա պիէս 1 գործ.

Նուսիգածներ ՝ „ 3 ”

Պահեստը Թիֆլիս՝ «Գուտտենբերգ» և «Կինորօնական», Բագու՝ «Սուրբողնիկ» զրավաճառանոցներում:

Հեղինակի հասցեն՝

Нахичевань ս/լ. А. Абеляну.